Միսաք Մեծարենց

Տապի նոպաներ

Զըրաշոգին գետին վրայեն ամպանըման կը բարձրանա.
կը փողփողին լազվարթ գույներ ճամբան ի վեր Կապույտ-Դարին.
շինականներ արևահար, ծերունի մը գյուղակ տարին.
արեգակի բորբ ընձյուղներ կ'այրեն ամեն ինչ անխընա:

Դարուղիեն կ'անցնին դանդաղ ուղտերը գորշ կարավանին,
թաթավելով իրենց հոգին հըրայքին մեջ տոթական.
երազանքին կիսատ թողած, գինով գինով վարդեր ինկա՞ն,
առանց սյուքի ու պլպուլի կը հեծե ցավն իր վարդենին:

Տիվագոլի երակներով բացավայրերն են բոցափայլ,
ծաղիկներու հոգեվա՞րն է, ժամն արևոտ տաղտապանքին.
բազմազեղուն բուրմունքներն են հեշտագրգիռ ու տապագին,
մենաբաղձիկ անտառին մեջ ո՛չ հեծություն կա, ո՛չ դայլայլ:

Ժայռերն անփույթ դեռ կը տաքնան, հանդարտորեն, լուսափողփող,
գիրկն անդորրին այս կիզանուտ և երազին տակ բոցավառ,
հնձողներու ձեռքեն հոս հոն հանկարծ կ'իյնա գերանդին վար,
ամենուրեք կը խըլրտի նոպան տապին տախտապարող:

Ըսպասումն է հեղգ ու ջերմին, կ'ուշանա դեռ հովն իրիկվան,
որ զովացիկ, պիտի մեղմե տենդն անպարփակ այս թալուկին.
ջերմակարոտ, փաղփուն օձեր լեռներեն վար կը սողոսկին,

և՝ հրրաշունչ արբշիռ ու բոցերազ՝ մերթ կը հևան:

Դաշտերու մեջ ընկուզիներ կը քընանան հոս հոն ցանցիր,
ո՛չ ճամփորդ կա, ո՛չ ալ թռչուն իրենց շուքին տակ ապաստան.
հսկա խորխի պես կ'երկարի, լայնատարած, մենիկ ճամփան՝
ուր սրլացքի ու քայլերու հետին մրմո՛ւնջն իսկ չի հածիր:

Թուրինջ գույներ ջրրանրկար… ծիրանի հե՛վք արևմարին…
Մրշակներ ու ձիավորներ պարտեզներեն կը դառնան տուն,
խարխուլ կամուրջն անոնց բեռին տակ կը հեծե խոնջ ու նրկուն,
գետեն անդին երանգ ու ձայն հետզհետե կը մարմրրին:

Ահա գիշերն ալ ծանր ու մեղկ կը գրլորի սարերեն վար,
ու տապահար դաշտավայրեր կը հագենան աղջամուղջով.
կենսանորոգ շունչ կը բերե ըսթափանքի կազդույրն այս զով,
բայց ցորեկին դեռ կը տևե բազմալեզու տենդն հրրավառ: